Գիտե՞ք, որ...

Թերթամետաղ

Գյումրվա կլկլան մետաղյա ջրխմիկ (մուշուրբա), որը պատրաստվում է մետաղի տարբեր տեսակներից, այդ թվում՝ ոսկուց և արծաթից: Կլկլան ջրխմիկը դարձել է Գյումրու քաղաքային մշակույթի խորհրդանիշներից:

Կարինից, Կարսից եկած արհեստավորների շնորհիվ Ալեքսանդրապոլում 20-րդ դարասկզբին կար շուրջ 100 արհեստ: Ծաղկում էր մետաղագործությունը, պղնձագործ վարպետները պատրաստում էին կենցաղային բազմապիսի իրեր, որոնցից մուշուրբան դարձել է Ալեքսանդրապոլի մշակութային խորհրդանիշներից:

Աշխատանքային նյութերը (հումքը) տարբեր են՝

- պղինձ,
- արույր,
- մելքիոր,
- արծաթ,
- ոսկի,
- մուշուրբան պատրաստվում է թիթեղի մեկ կտորից:

Աշխատանքային գործիքները, տեխնիկաները

Մուշուրբա պատրաստելիս վարպետները կիրառում են՝

- կռման,
- զոդման,
- դրվագման,
- փորագրման,
- կոկման,
- փայլեցման տեխնիկաները:

Տեխնոլոգիական գործընթաց

Եթե ջրխմիկ մուշուրբայի մետաղ է ընտրվում պղինձը կամ լատունը, ապա զոդանյութը պետք է պարունակի արծաթ, որպեսզի ամուր զոդվի, միացումները լինեն հարթ:

Կոշտոյանների «կլկլաններն» ասեղնագործ են: Պապերից են սովորել հին Գյումրվա նախշերը: Վարպետ Ցոլակը նախշազարդում է մուշուրբան, հետո ղալամով քաշում: Մինչ ղալամ քաշելը կտորները զոդում-նախշազարդում է, վերջում էլ փայլեցնում է: Մեկ մուշուրբան պատրաստում է ամենաքիչը 20 օրում, բացառապես արծաթից, երբեմն էլ՝ ոսկեջրում:

19-20-րդ դարերում հայերն իրենց կենցաղում ջուր խմելիս գործածել են պղնձե ջրխմիկներ (ջուր խմելու ման): Պղնձե ջրխմիկները արտաքին ձևով բաժանում են երկու մեծ խմբի՝

- առաջին խումբ- նստուկավոր, միկանթանի, ուռուցիկ իրանով, դեպի դուրս կտրված եզրով ջրխմիկներ, հայտնի են մուշուրբա կամ կլկլան անվանումներով,
- երկրորդ խումբ - գոգավոր հատակներով, միականթ, գլանաձև, ուղիղ ջրխմիկներ, հայտնի են դոլչա անվանումով: Դոլչա նշանակում է ջրաման, պղնձե փարչ:

Պատմությունը

Վարպետներ

Վարպետ Ցոլակի տոհմը զբաղվել է արծաթագործությամբ: Կոշտոյանների տոհմի չորրորդ սերնդի վարպետ Ցոլակը կերտել է արծաթաջուր և ոսկեջուր մուշուրբաներ՝ որպես հուշանվերներ, դրանք չեն կիրառվում կենցաղում:

Վարպետ Ցոլակը շատ ճանաչված մարդկանց համար է պատրաստել մուշուրբա, հատուկ սիրով է մուշուրբաները նվիրել Հռոմի պապին և Սպիվակովին: Սա վարպետ Ցոլակի համար կյանքի մասնագիտություն է: Սերն ու կարոտն օգնում են ավելի ստեղծագործաբար մոտենալ արհեստին, ավելի շատ գնահատել այն և թողնել պապենական գործի ինքնատիպ ձեռագիրը: Դասական մուշուրբան նախշազարդ չէ, հատակին դրվում է պատրաստող վարպետի կնիքը՝ անվան սկզբնատառերով:

ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի որոշմամբ՝ ՀՀ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը համալրվեց մուշուրբայով՝ որպես վերացող մշակութային արժեք:

Նկարագրություն

Մուշուրբա ջրխմիկը հատուկ է Շիրակի պատմաազգագրական շրջանին:

Ըստ Հր. Աճառյանի՝ մուշուրբա բառը արաբերենից փոխառություն է:

Պոլսի բարբառում հանդիպում է «մօռշուփա», իսկ Վանի բարբառում՝ «մուշուրբա» ձևը, որ նշանակում է «ջրի թիթեղյա ըմպանակ»:



Գրականություն

Մ. Ավետիսյան, «Մետաղյա ջրխմիկների տիպաբանական բնութագիրը», ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական աշխատանքներ, հ. 24, 2021: